

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի մարզային փուլ - 2021թ.

10-րդ դասարան - տևողությունը՝ 120 րոպե

1. Թվարկված երկրներից դուրս գրել բնակչության վերարտադրության երկրորդ տիպին պատկանող երկրները.....
1 միավոր
Գերմանիա, Ավստրիա, Իրան, Ֆրանսիա, Բանգլադեշ, Ինդոնեզիա, Ճապոնիա, Չեխիա, Պակիստան, Բրազիլիա, Ռուսաստան, Ավստրալիա:

2. Ընտրել և դուրս գրել նստվածքային ծագման ապարները.....
1 միավոր
գնեյս, կերակրի աղ, մարմար, տուֆ, կվարց, գրանիտ, կավ, բազալտ, ավազ, կրաքար, բյուրեղային թերթաքար, օբսիդիան

3. Տվյալ ջերմաստիճանում օդի բացարձակ խոնավությունը 12 գ/մ³ է: Որքա՞ն կկազմի հազեցման համար անհրաժեշտ խոնավության քանակը, եթե հարաբերական խոնավությունը 60 % է.....
1 միավոր

4. Հացահատիկի միջին բերքատվությունը 24 ցենտներ/ հա է: Որքա՞ն բերք կստացվի 100 հեկտար տարածքից: Պատասխանը նշել տոննայով.....
1 միավոր

5. Լրացնել բաց թողնված աշխարհագրական օբյեկտները և թվերը.....
1 միավոր
Չանգեզուրի լեռնաշղթայի բարձր գագաթըէ, որն ունի.....մետր բարձրություն: Լեռնաշղթայից արևելք ճյուղավորվում են.....ևլեռնաբազուկները:

6. Լրացնել շարքը համապատասխան մեկ մշակաբույսով.....
1 միավոր
1. թեյ, սուրճ, 2. բամբակենի, վուշ,
3. ձմերուկ, դդում, 4. սոյա, արևածաղիկ,

7. Քանի՞ հորիզոնական կարելի է տանել քարտեզի վրա Ատլանտյան օվկիանոսի մակարդակից մինչև Մոնբլան լեռան գագաթը, եթե հորիզոնականները տարվեն յուրաքանչյուր 400 մետրը մեկ.....
2 միավոր

8. Թվարկել տնտեսության ոչ արտադրական /ոչ նյութական/ ոլորտի 4 ճյուղ.....
1 միավոր

9. Նշված ժողովուրդներից յուրաքանչյուրի դիմաց գրել համապատասխան լեզվաընտանիքը և լեզվախումբը.....
2 միավոր
հայեր, քրդեր, շոտլանդացիներ, կարակալպակներ, հունգարներ, լիտվաներ, արաբներ, կալմիկներ:

10. Թվարկել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության մեջ մտնող երկրները և դրանց մայրաքաղաքները.....
2 միավոր
11. Ո՞րն է ակտիվ և պասիվ առևտրային հաշվեկշիռների տարբերությունը.....
1 միավոր
12. Աշխարհագրական հետազոտության մեթոդների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....
1,5 միավոր
1. Կոնկրետ գիտական մեթոդները կիրառելի են գիտության բոլոր ճյուղերում:
 2. Աշխարհագրական տեսական մեթոդներից լայն տարածում ունի դաշտային /արշավախմբային/ մեթոդը:
 3. Համագիտական մեթոդները կիրառվում են միայն գիտության որոշակի ճյուղերում:
 4. Նկարագրական մեթոդը գիտական ճանաչողության հնագույն մեթոդներից է:
 5. Համեմատական աշխարհագրական մեթոդի էությունն այն է, որ համեմատելով աշխարհագրական տարբեր օբյեկտներ, փորձում են բացահայտել դրանց զարգացման ընդհանուր օրինաչափությունները և տարբերությունները:
 6. Աշխարհագրական հետազոտության մեթոդները լինում են մասնավոր աշխարհագրական և համաաշխարհագրական:
13. Աշխարհի քաղաքական քարտեզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....
1,5 միավոր
1. Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման միջնադարյան փուլը կապված է կապիտալիստական դարաշրջանի հետ:
 2. Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանն ընդգրկում է 16 – 19-րդ դարերը:
 3. Տարածքի մեծությունը քաղաքաաշխարհագրական գործոն է:
 4. Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևորագույն իրադարձություններից են Օսմանյան և Ռուսական կայսրությունների փլուզումը:
 5. Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի կարևոր իրադարձություն չէ գաղութային համակարգի փլուզումը:
 6. Գաղութային անցյալն ազդել է Աֆրիկայի երկրների սահմանների գծագրության ձևավորման վրա:
14. Տրված հարթավայրերը դասավորել ըստ բարձրության նվազման կարգով.....
1 միավոր
1. Միջին ռուսական
 2. Մերձկասպյան
 3. Միջագետքի
 4. Բրազիլական
15. Ի՞նչ է գյուղատնտեսության վարման էքստենսիվ ուղին.....
2 միավոր
1. տալ հասկացության սահմանումը,
 2. ո՞ր տիպի երկրներին է բնորոշ / թվարկել 8 երկիր/: